ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀՄԱՅԱԳՐԵՐԸ

Է. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ

Վարդանանց հերոսամարտի վիպերգու Եղիշեն, իր մի անտիպ աշխատության մեջ, փորձում է բնորոշել իր ժամանակի լեզուները՝ վեր հանել նրանց առանձնահատկությունները. «Հույների լեզուն,—գրում է նա,—փափուկ է, հռոմեականը՝ կտրուկ, հունինը՝ սպառնական, ասորունը՝ աղաչական, պարսկինը՝ պերճ, ալանինը՝ գեղեցկազարդ. գոթինը՝ ծաղրական... և այլն, իսկ հայինը՝ համեղական է, որ «կարէ զամէնն յինքն ամփոփել»[1]։

V դարում ստեղծված հայ մատենագրության լեզուն իրոք կատարյալ է ու գեղեցիկ։ Հայ և օտարազգի մի շարք գիտնականներ, հարցը խորապես չուսումնասիրելով, դասական հայերենի կատարելությունը բացատրելու համար ենթադրել են, որ հայերը դեռևս հեթանոսության ժամանակ ունեցել են մայրենի լեզվով գիր ու գրականություն։ Այս ենթադրությունը հակասում է հայ հին մատենագիրների (Կորյուն, Փարպեցի, Խորենացի) հաղորդած որոշակի տվյալներին, որոնք միաբերան վկայում են, թե Մաշտոցն է հայ գրի ու գրականության հիմնադիրը։ Չհաշտվելով, սակայն, այդ իրողության հետ, նախամեսրոպյան գրի ու դպրության գոյությունը հաստատել կամեցող գիտնականները աշխատել են հիմնավորել իրենց թեզը. հայ և օտար աղբյուրների մի քանի մշուշապատ արտահայտությունների մոտացածին իմաստ վերագրելով. ինչպես նաև «չէր կարող գոյություն չունենալ», «պետք է գոյություն ունենար» և նման այլ հայտարարություններով։

Մանրամասն քննարկելով ու հերքելով բոլոր այդ «փաստարկները», մեծանուն հայագետ Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատության մեջ գրել է. «Ս. Մեսրոբեն առաջ հայերեն գրականություն տեսնելը, որ իբր թե ջնջեց Լուսավորիչը՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիտ հեքիաթ մ'է միայն»[2]։ Այդ «հեքիաթին», սակայն, ոմանք դեռևս հավատում են, իսկ պրոֆ. Ա. Աբրահամյանը, կրկնելով իր նախորդներին պնդում է, թե հայերը մինչև Մաշտոցի մեծ գյուտը ունեցել են մայրենի լեզվով «հարուստ գրականություն»[3]։

Մեր նպատակից դուրս համարելով նախամեսրոպյան գրի գոյության դատին մեջ բերվող կարծեցյալ «փաստարկների» կրկին հերքումը, նշենք միայն, որ հայոց լեզվի կատարելությունը հայ մատենագրության արշալույսին՝ եզակի երևույթ չէ բնավ։ Զարմանալի լեզվական կատարելությամբ են շարադրված արաբական, պարսկական, սլավոնական և այլ գրականությունների անդրանիկ

1 Մատենադարան, ձեռ. № 1267, էջ 48բ։

2 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 106։

3 Տե՛ս, օրինակ, Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 33—46։

արտադրանքները. երկար դարեր նրանք համարվել են օրինակելի և անգերազանցելի նմուշներ մայրենի գրականության։ Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է պրոֆ. Է. Աղայանը, «դասական գրաբարը՝ V դարի առաջին կեսի մատենագրության լեզուն, հենց այդ ժամանակի կենդանի, խոսակցական լեզուն է, գրական աստիճանին բարձրացած», և այն «չէր կարող անմիջական կապ ունենալ նախաքրիստոնեական շրջանի գրական լեզվի հետ»[4], եթե նույնիսկ նախաքրիստոնեական շրջանում հայերն ունեցած լինեին գիր ու գրականություն։

Անհրաժեշտ ենք համարում պարզություն մտցնել նաև հետևյալ հարցում։ Որոշ գիտնականներ հավասարության նշան են դնում «գիր» և «գրականություն» բառերի միջև. եթե եղել է գիր, եղել է ուրեմն նաև գրականություն,—ենթադրում են նրանք։ Այս տեսակետի հետ ես բնավ չի կարելի համաձայնվել։

Ինչպես ամեն բան աշխարհում, այնպես էլ գիրն ապրել է իր զարգացման հազարամյակների պատմությունը։ Գրի սաղմնավորման շրջանին հատուկ է պատկերագիրը (պիկտոգրամմա), որի միջոցով հնարավոր էր գրանցել որևէ պարզ դեպքի կամ իրողության մոտավոր բովանդակությունը, առանց լեզվական կապի, առանց մտքերի ու բառերի մասնատման։ Գրի զարգացման հաջորդ փուլին հատուկ է գաղափարագիրը (իդեոգրամմա), որով արդեն արտահայտվում էին ամբողջական բառեր։ Գաղափարագրերը, սակայն, անկարող էին արտահայտել տվյալ լեզվի հնչյունները, ուստի միաժամանակ կարող էին կիրառվել այլալեզու տարբեր ժողովուրդների կողմից։ Գաղափարագրերի հետագա զարգացումով ստեղծվում է վանկային գիրը, որի մեջ արդեն նախկին գաղափարագրերին, կամ նրանց մի զգալի մասին, տրվում է վանկային իմաստ, ուստի վանկային գրերն արդեն այս կամ այն չափով հնարավորություն են ընձեռում արտահայտել, սակավ կամ առավել հաջողությամբ, տվյալ լեզվի բառերի հնչույթը։ Տառային կամ հնչյունային այբուբենները գրի զարգացման ամենարարձր աստիճանն են ներկայացնում։

Հանրահայտ ճշմարտություններ են սրանք, որոնց կրկնությունը այնուամենայնիվ անհրաժեշտ է՝ խնդիրը հստակորեն ըմբռնելու համար։

Մեր աճվանի հայագետներ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Ստ. Մալխասյանցը և այլ գիտնականներ, երբ ասում են, թե Մաշտոցից առաջ հայ գրականություն չի եղել, դրանով նրանք բնավ չեն ժխտում պատկերագրերի կամ գաղափարագրերի գոյությունը Հայաստանում. այդ հարցը նրանց չի էլ հետաքրքրել։ Նրանք մերժել են հայերեն լեզվով հեթանոսական «աղքատ» կամ «հարուստ» գրականության գոյությունը, մի բան, որ մեր համոզմունքով վեճի առարկա չի կարող լինել։

Սրանով, արդյոք, սպառվելո՞ւ է հարցը, բացառվա՞ծ է արդյոք հասարակական խիստ նեղ նպատակների ծառայող, նախնական ու պրիմիտիվ սիստեմի ինչ-որ գաղափարագրերի գոյությունը հեթանոսական Հայաստանում։ Ոչ, չի բացառված։ Ենթադրելով այդպիսի գրերի որոնման ուղղությամբ մեզ մոտ դեռևս ծրագրված աշխատանք չի տարվել, այնուամենայնիվ արդեն գտնվել ու նկարագրվել են մի շարք ժայռագրություններ (պատկերագրեր, իծագրեր), ինչպես նաև գրի ավելի բարձր զարգացման աստիճանը հիշեցնող այլ նշաններ. հավանաբար՝ գաղափարագրեր (նկատի ունենք Ցոլակերտի արձանագրություն-

---

4 «Սովետական Հայաստան», 1962, № 94։

ները)։ Առայժմ դժվար է որոշել, թե ովքե՞ր են փորագրել այդ գաղափարագրերը՝ հայերը, թե՞ Հայաստանի նախարնիկները։

Կարելի է հուսալ, որ հեթանոսական Հայաստանի նշանավոր բնակավայրերի, մանավանդ պաշտամունքային հուշարձանների պեղումները կարող են նոր ու անակնկալ նյութեր տրամադրելով գիտությանը՝ լույս սփռել նաև այս հարցի վրա։ Բայց սպասելու հարկ չկա. հայ մշակույթի պատմության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող հարցի լուծմանը, կարծում ենք, շոշափելի նպաստ կարող են բերել նաև հմայական նշաններ պարունակող հայերեն ձեռագրերը, որոնց բնույթի ու բովանդակության պարզաբանմանն է նվիրված մեր այս հոդվածը։

* * *

Հայ մատենագրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի գրական երկերից, ի բաց առյալ «Հաճախապատում» ճառերը պահպանվել են միայն բեկորներ։ Ներմուծված լինելով «Հայոց կանոնագրքի» խմբագրություններից մեկի մեջ, պահպանվել ու հասել է մեզ Մաշտոցի «Խրատագիր և զգացուցիչ» շրջաբերական թղթերից մի փոքրիկ հատված, որն ուղղված է հեթանոսական հավատալիքների և, մանավանդ, հմայությունների դեմ. «Երդոք և հմայք և յուռութք և բաշաղանք և դիւթութիւնք և թովութիւնք և հարցուկք և ձեռնածուք և դեղահատք և խտիրք և որ ինչ նման են սոցին»։ Մաշտոցը հայտնում է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում կամ իրենք իսկ կատարում են այդպիսի հմայություններ «նզովեալ են ի սուրբ եկեղեցւոյ և արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց»[5]։

Մաշտոցի սկսած պայքարը հեթանոսական հավատալիքների ու պատկերացումների դեմ, գրեթե առանց ընդհատումների, շարունակվում է ողջ միջնադարում։ Եվ հայ հարուստ մատենագրությունը հնարավորություն է ընձեռում հետևելու այդ պայքարի առանձին դրվագներին, նոր տվյալներ քաղելու մեր ժողովրդի հնամենի պատկերացումների, ծեսերի, կախարդության, մոգական բժշկության ձևերի ու եղանակների և հարակից այլ հարցերի մասին։

V դարի հայ նշանավոր մատենագիր Եղիշեից պահպանվել է ինչ-որ ընդարձակ աշխատության (հավանաբար «Արարածոց մեկնութեան») մասը կազմող մի թանկագին բեկոր։ Այստեղ, ժողովրդական սնահավատությունների մասին խիստ հետաքրքրական խմբարկումը կատարելիս, հեղինակը գրանցել է նաև ուշագրավ այսպիսի տողեր. «Թէ որ այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ ատար խորհրդով՝ նշանագիրս գծել կամ մարգարէանալ առ յապայսն և երազահմայ լինել... այն արտաքոյ է քրիստոնէութեան»[6]։

Այսպիսով, V դարի 80-ական թվականներից (հենց այս թվականներին պետք է գրված լինի Եղիշեի «Արարածոց մեկնությունը») ուղղակի վկայություն ունենք ինչ-որ նշանագրերի մասին, որոնք գրվում էին «ատար (այսինքն՝ հեթանոսական) խորհրդով» այնպիսի մարդկանց կողմից, որոնց եկեղեցական հեղինակը համարում է «արտաքոյ քրիստոնէութեան»։

Այս նույն նշանագրերի մասին հետաքրքրական մանրամասնություններ են գրանցված Հովհան Մանդակունուն (V դար) վերագրվող, բայց Հովհան Մայ-

5 «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 371։
6 «Մատենագրութիւնք Եղիշէի», էջ 376։

բավանեցուն (VII դար) պատկանող՝ «Թուղթ վասն հմայից դիւթականաց և անօրէն յուռթողաց» ճառի մեջ[7]։ Ճառի հեղինակը, իր նախորդների նման, ձգտում է համոզել իր ունկնդիրներին, որ դյութերը, թովիչները, հարցուկները ու բոլոր հմայիչները սատանայի պաշտոնյաներ են. քրիստոնյաները չպետք է խարվեն նրանց պատիր հմայություններով, պետք է խորշեն նրանցից՝ որպես հեթանոս խարերաներից։ «Իսկ եթէ անձամբդ,—գրում է նա,—առ դիւթս և առ թովիչս և առ հարցուկս և առ տուռութս ե առ խտիրս և առ հմայս դերեսցիս, ոչ ևս պարտ է զանձն կոչել քրիստոնեայ, զի հեռացեալ ես ի Քրիստոսէ»[8]։ Ճառի մեջ, այնուհետև, թվարկված են բազմապիսի հմայական ձևեր ու եղանակներ, որոնցից ուշագրավ է հատկապես՝ «գիր պահարան ընդ անձն արկանել»-ը[9]։ Մայրավանեցին խարված է համարում նրանց, ովքեր «գիր պահարան» գրոգներին բժշկի տեղ են ընդունում. այդ գրերը ինքնավ չեն կարող ակնկալվող ներգործությունն ունենալ հիվանդների վրա, որովհետև իսկական բժիշկները բուժում են սպեղանիներով ու խարելով, իսկ «գիր պահարան՝ հակառակ է շնորհաց և պատուիրանացն աստուծոյ[10]»,—գրում է Մայրավանեցին։ Նա նկարագրում է այդ «գիր պահարանների» կիրառության կերպը, որոշ չափով նաև բովանդակությունը՝ Ճառի ստորև բերվող հատվածում. «Գրեալ պահարանս ի փողս ցաւածիցն արկանեն և ժաժմուկս մտացածին բանից և զանուան որ ոչ լսի ի պատուիրանս՝ գրածս առնեն, և զանուն Քրիստոսի ընդ նոսին արկանեն, զի գրածն աստուածական համարեսցի» և այլն[11]։

Քննարկվող հարցի կապակցությամբ բացառիկ նշանակություն ունի XIII դարի նշանավոր առակագիր և քարոզիչ Վարդան Այգեկցու «Վասն կռապաշտութեան» անտիպ քարոզը։ Շուրջ 900 տարի էր անցել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելու ժամանակներից, բայց Վարդան Այգեկցու հաղորդած տվյալները վկայում են, որ հայ ժողովրդի աշխարհայացքի մեջ դեռևս կենսունակ էին հեթանոսական պատկերացումները, ծեսերն ու սովորույթները։ Ծանոթանանք այդ քարոզի՝ մեր նյութին առնչվող մասերին։

Ըստ Այգեկցու, սատանայի սերմանած չարիքներից է և այն, որ «մեծաց առ ազգս կանանց, նաև յազգս արանց՝ ուսումն ծրարագործութեան[12] և այլ փաբերք սատանայականք. և խարանաւք ուսուցանեն մի զմի և զտգէտս կործանեն ի նոյն չարն»[13]։

Կռապաշտության սյուներն են՝ աստղաբաշխությունը, կախարդությունը մարդկանց ճակատագրի գուշակությունը և այլն. այդ սյուները, սակայն, արձակել են բազմապիսի ճյուղեր, որոնք թվարկված են Այգեկցու կողմից՝ քարոզի ստորև բերվող հատվածում. «Դեղատուութիւնն, և զարբնկեցութիւնն, և ձեռնածութիւնն, և լուսնագիտութիւնն, և աստեղաբաշխութիւնն, և չար ասել զօրն և կամ զպահն,... հայել ի կենդանակերպս և ասել բախտարկութիւն և ճակատագրութիւն իմն՝ չարի պատահել կամ բարոյ, քննել ախտարացոյցս և

7 «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Ճառք», Վենետիկ, 1836։

8 Նույն տեղում, էջ 184։

9 Նույն տեղում, էջ 185։

10 Նույն տեղում, էջ 186։

11 Նույն տեղում, էջ 187։

12 Քարոզի մի այլ հատվածում «ծրարագործութեան» փոխարեն ասված է՝ «գիւաղ շունչ ծրարս»։

13 Մատենադարան, ձեռ. № 8030, էջ 209ա։

ծնողաբանել զթիւ ամաց մարդկան, և այլ ծրարք և հանգուցակք իմն, և լեզուակապք և քաղցրագեղք և անասնակապք իմն, զոր գայլակապս կոչեն. նաև կազեն գայր. զի թուլացեալ ի կին մերձենալ ոչ կարէ, և այլ անբաւ հեթեթանք»[14]։ Այգեկցու ժամանակակիցները անվերապահորեն հավատալով հեթանոսական անահավատություններին և կախարդություններին, ի մեծ վիշտ մեր հեղինակի՝ «փաղչին յեկեղեցւոյ և ի խաչէ, յաւետարանէ և ի բահանայէ, յաղօթից և ի պահոց... և առհասարակ զոհ տուեալ՝ երթան առ կախարդս»[15]։

Հմայության ու կախարդության՝ միջնադարում հարատևած ձևերի մասին կան նաև այլ ձեռագրական տվյալներ։ Մեր նպատակը չէ մատենագիտական լրիվ ցանկը տալ այդ կարգի նյութերի, ուստի բերածով սահմանափակվենք։ Նշենք միայն, որ կախարդության ու գուշակության դեմ «Հայոց կանոնգրքի» մեջ մուծվել են նաև մի շարք կանոններ, որոնցից հատկապես երկուսը սերտորեն առնչվում են քննարկվող նյութին։ «Հարցմունք պէս-պէս և պատասխանիք Աթանասի Աղէքսանդրացւոյ եպիսկոպոսի» խորագրով կանոնխմբի մեջ, օրինակ, կա այսպիսի հարց ու պատասխան. «Հրց. Վասն պահպանաց երդմունս իմն և պահպանութիւնս դրեն և անուանս ազգի ազգիս, զոր մեք ոչ գիտեմք. պա՞րտ է համարձակ թողուլ զնոսա առնել զայն, թե՞ նզովել և կարճել. Պատ. Նզովել պարտ է և յեկեղեցւոյ ևս հանել»[16]։

Մի այլ կանոնխմբի մեջ կարդում ենք. «Որ զհետ դիւթաց երթան և կամ զգիրս կախարդաց և կամ զիրս կախարգութեան ուսանին, և զղջան ի բոլոր սրտէ՝ է (7) ամ ընդ ոնկնդիրսն ապաշխարէ»[17]։

Նզովքը, արտաքսումը եկեղեցուց, յոթնամյա ապաշխարություններ և սահմանված այլ պատիժներն անդամ անզոր են եղել արմատախիլ անելու հազարամյա հնությունից եկող հեթանոսական հավատալիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցությունից, և դրանք հարատևել են մինչև վերջին տասնամյակներն ու գրանցվել Հայաստանի մի շարք շրջաններում՝ XIX—XX դարերի հայ ազգագրագետների կողմից։

Մեջ բերված նյութերը, այսպիսով, վկայում են այն մասին, որ սկսած հենց հայ մատենագրության սկզբնավորման ժամանակներից՝ մինչև ուշ միջնադար, հայ կախարդները, բախտագուշակներն ու մոգական բժշկությամբ զբաղվող անհատները, ի թիվս այլ կախարդությունների, գծել են նաև ինչ-որ նշանագրեր (Եղիշե), հիվանդների վզներին ինչ-որ «դրեալ պահարան»-ներ են արկանել (Հովհան Մայրավանեցի), ինչ-որ «դիւաց շունչ ծրար»-ներ ու «սատանայական փաթեթ»-ներ կազմել (Վարդան Այգեկցի), «զգիրս կախարդագրել և ուսուցանել («Կանոնգիրք հայոց») և այլն։

Արդ, հնարավո՞ր է արդյոք պարզել, թե ի՞նչ էին եղել և ի՞նչ տեսք են ունեցել հայ եկեղեցու վարդապետների իսկ վկայությամբ հեթանոսական հնությունից ժառանգված կախարդական կամ հմայական այդ գրերը։

Այս հարցերին պատասխանելու համար դիմելու ենք առաջին հերթին բազմաթիվ ձեռագիր օրինակներով մեզ հասած հմայիչներին և ախտարական ձեռագրերին։ Հմայիչները գրավում են մեր ուշադրությունը նախ և առաջ իրենց

---

14 Մատենադարան, ձեռ. № 8030, էջ 209բ։
15 Նույն տեղում, էջ 210ա։
16 Նույն տեղում, ձեռ. № 6409, էջ 60բ։
17 Նույն տեղում, ձեռ. № 7066, էջ 11բ։

արտաքին տեսքով. ի տարբերություն բոլոր մյուս ձեռագրերի՝ նրանք ժապավենաձև փաթեթների տեսք ունեն (շուրջ 10 սանտիմետր լայնքով և, երբեմն, 10-ից ավելի մետր երկարությամբ)։ Հայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջանում, թե՛ Հռոմեական կայսրության մեջ և թե՛ Ասորիքում, ամենուրեք տարածված էին առանձին տետրակներով և նրանց միացումով ստեղծված գրքերը։ Փաթեթավոր գրքերն ընդհանրապես, տվյալ դեպքում հմայիլները, իրենց արտաքին ձևով գրքի ավելի հին տիպի ներկայացուցիչներ են։ Էլ ավելի հետաքրքիր են հմայիլները իրենց բովանդակությամբ։

Ահա հենց այս ժապավենաձև, ապա նաև սովորական գրքի տեսք ստացած հմայիլներն են, որ պահպանել են հեթանոսական հավատքի իսկ կնիքը կրող մեծաքանակ այնպիսի հմայական բանաձևեր, պահպանակ գրեր ու աղոթքներ, որոնց մասին ակնարկներ ունեին իրենց ճառերում հեթանոսական հավատալիքների դեմ պայքարող վերոհիշյալ հայ մատենագիրները։

Ծանոթանանք այդ կարգի մի քանի հմայական բանաձևերի.

1. ԴԻՐ ՁԱՐ ԱՁՔԻ

Ազի, մազի, զարեխի, զմրուխի.
Եվ հովիւն Սիրանի,
Արաձէր յովիտն Միրանի.
Յանիսիաց պանիր Եհաս,
Որ ոմ տեսաւ զարմացաւ,
Որ ոմ կերաւ պատսուեցաւ։
Ամենայն չար ակն նոյնպէս պատասեսցի ի դիմաց ծառայիցս
աստուծոյ (այս անուն)՝ ընտանեաց և աներսոց և խաչանց
և կարին և մայրեաց և մեղուաց և երիվարաց և շտեմարանաց
և ամենայն գոյից. յանուն հաւր և որդւոյ և հոգոյն[18]։

2. ԴԻՐ ՄԸՄԱՅԱԻԻ

Մայր Միրանի, դուսդր Միրանի, դ՝տրբ (՞) Միրանի։ Երբայմ
մաղ՝մ ալի ծաղիկ, անհի ծաղիկ, ծիլ ծաւ ծոմալ, ալ փարատեցան[19]։

3. ԴԻՐ ԿԱՊԻ

Բազրուն, տապուկ, սաղուկ, սիրաս, փիրակ, կանարուկ,
անտիրարիր, իղամիրամ, լոբինակաւոր[20]։

4. ԴԻՐ ՋԵՐՄԱՆ

Մահիսահի, շարահի աեի, սպանուրեան աեի, անդոնի աեի.
ալիխրի աեի, վասն ձեր արեուտ՝ բողէմ զծառայս աստուծոյ[21]։

5. ԴԻՐ ԴԼԽԱՅԱԻԻ[22]

Մաս մի կայր ի մէջ երկրի,
Որ ոչ ճիւղ ունէր և ոչ տերև և ոչ արմատ.
Աբծիւ մի նստեալ էր ի վերայ նորա,

18 Մատենադարան, ձեռ. № 4600, էջ 68ա։
19 Նույն տեղում, ձեռ. № 6867, էջ 545։
20 Նույն տեղում, ձեռ. № 4600, էջ 70բ։
21 Նույն տեղում, էջ 71ա։
22 Նույն տեղում. հմայիլ № 11 (A) և ձեռ. № 3248, էջ 51բ (B)։

Որ ոչ գլուխ ունէր և ոչ բև և ոչ ոտք:
Հարցում եղեն[23] արծիւն այն և ասեն.
Որ նստեալդ ես ի ծառդ, որ ոչ ճիւղ ունի և ոչ տերև և ոչ արմատ:
. . . . . [24]
Ասէ արծիւն՝ այս պեղծն.
Երբամ նստիմ ի գլուխ մարդոյն,
Ցմիսն ուտեմ և զրզեղն ծծեմ
Եւ զսչաղ լոյսն պակասեցուցանեմ:
Եւ լսեցին զայն հրեշտակք և հրեշտակապետք և ասացին[25]
Կապեմք զհեկ Դէմն (365) սրբոն, որ կան ի սիրտ արեզականն...:

Օրինակների թիվը կարելի է բազմապատկել. մենք ընտրությամբ մեջ բերեցինք այնպիսիները, որոնք բոլորն էլ, լինելով հմայական բժշկության դեղատոմսեր, ուղղված են տարբեր հիվանդությունների դեմ։ Դրանք, անշուշտ, միջնադարյան խմբագիրների և ընդօրինակողների կողմից կրել են մեծ ձևափոխություններ. մեկի մեջ մուծված է քրիստոնեական եռաստվածության բանաձևը (հայր, որդի, հոգի), մեկ ուրիշում ջերմով տառապող հիվանդը կոչվում է «ծառայ աստուծոյ», երրորդում հիշատակվում են հրեշտակներ ու հրեշտակապետներ և այլն։ Այս ներմուծությունները, սակայն, էական չեն, հմայական այդ բանաձևերը, իրենց հիմնական մասով, անշուշտ, հազարամյակների հնության կնիք են կրում և չեն առնչվում քրիստոնեական ըմբռնումների հետ։

Վիշապաքաղ Վահագնի ծննդյան մասին հեթանոսական երգի մեջ հանդիպում ենք Միրանի ծովն, որն իր երկունքով մասնակցում է ամպրոպ-աստծո ծնունդյանը. չար աչքի հմայական բանաձևի մեջ հիշատակվում է այդ Միրանի մայր աստվածության հովիվը, որն արածացնում է աստվածության խաշներին Միրանի հովտում, ծծացավի հմայական բանաձևի մեջ հիշատակվում են Միրանի մայրը և Միրանի դուստրը։

Արտավազդի մասին հնագույն հայկական առասպելներում կան տվյալներ, որ նա կոչվել է նաև Շիդար անունով. և ահա «դիր կապի» հմայական բանաձևի մեջ, ի թիվս հնության դրոշմ կրող այլ անվանակոչումների (տապտուկ, սաղուկ, փիրակ, կանաբուկ և այլն), հանդիպում ենք նաև Սիթառին, որ հիշեցնում է մեզ վերոհիշյալ Շիդար-Արտավազդին։ Գլխացավի հմայական բանաձևի մեջ նկարագրվում է կենաց ծառի հակոտնյա մահվան ծառը, «որ ոչ ճիւղ ունէր և ոչ տերև և ոչ արմատ» և չարագուշակ ու մահաբեր սանդարամետյան արծիվը, «որ ոչ գլուխ ունէր և ոչ թև և ոչ ոտք» և այլն, և այլն[6]։

Եվ այս բոլորը, լրացնելով մեկը մյուսին, վկայում են այն մասին, որ հմայիլ կոչվող ժապավենաձև ու գրքանման ձևագրերը, չնայած իրենց ճնշող մեծամասնությամբ պահպանվել են նորագույն ժամանակների (XV—XVIII դարերի) ընդօրինակություններով, իրենց մեջ բովանդակում են հեթանոսական ըմբռնումների ու պատկերացումների արգասիք հանդիսացող հմայական ու մոգական զանազան աղոթքներ ու բանաձևեր։

---

23 A հարցին։
24 Պակաս է երևում։
25 B հրամայեցին և ասեն փխ. ասացին։
26 Ա. Մնացականյանը «Հայկական զարդարվեստ» իր ուսումնասիրության մեջ (Երևան, 1955, էջ 542), Մատենադարանի № 605 ձեռագրի պահպանակից քաղելով, տպագրել է «Գիր կովի» կոչվող հմայական մի բանաձև, որի մեջ հիշատակված է հեթանոս հայերի մեռնող ու հարություն առնող Արա աստվածությունը՝ «սուրբ Արայ» քրիստոնեական զգեստավորությամբ։

Սրանով, սակայն, չի սպառվում հմայիլների գիտական նշանակությունը. նրանցից շատերի մեջ կան ինչ-որ տարօրինակ նշանագրեր, որոնք արված են դարձյալ հմայական ու բուժական նպատակներով՝ չար աչքից զերծ մնալու, չար ոգի թպղիին հալածելու, կատաղած շնից անվնաս մնալու, դիվահարներին բուժելու, սիրածի սերը նվաճելու և բազմաթիվ այլ ակնկալություններով[27]։

Ծանոթանանք նաև այդ կարգի մի քանի հմայագրերի.

1. Դիր չար սչից պահպանուրեան[28]

2. Այս տլիսմս որոյ վերայ կենայ՝ կախարդուրիւն ոչ բանի յինքն[29]

3. Այս բլիսմս գրիր ի վերայ հաց(ի), տուր շան որ ուտէ. կապվի լեզուն շարայկամին...[30]

4. Դիր սիրոյ, ջուրն ձգէ, տուր խմէ՝ սիրէ[31]

27 Տե՛ս, օրինակ, Մատենադարան, հմայիլ №№ 5, 11, 134, ձեռ. №№ 1322, 6867, 6678, 4600, 9072 և այլն։

28 Մատենադարան, հմայիլ № 11։

29 Նույն տեղում, հմայիլ № 5։

30 Նույն տեղում, ձեռ. № 4322, էջ 30ա։

31 Նույն տեղում, ձեռ. № 9072, էջ 26բ։

Բազմաթիվ հմայական գրեր կան Մատենադարանի մի շարք ձեռագրերում (օրինակ, ձեռ. №№ 4322, 6867) պահպանված ուշագրավ մի բնագրին առընթեր, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. տասներկու կենդանակերպերից ամեն մեկի տակ ծնված մարդիկ ունեն իրենց հատուկ թշնամի ու հիվանդարեր դևեր, որոնք բնակվում են տարբեր վայրերում՝ դռան շեմին, կրակի եզրին, ջրին մերձ, հորի մեջ, ավերակ ջրաղացներում և այլուր։ Սողոմոն Իմաստունը հանդիպում ու հարցաքննում է այդ դևերին, սովորում նրանց հիվանդարեր ներգործությունից մարդկանց փրկելու եղանակները և հաղորդում մարդկանց։ Այդ դևերին դիմագրավելու համար մարդիկ պետք է գիտենան դրանցից յուրաքանչյուրին հալածող 3 կարգի հմայական գրերը—թլիսմները. առաջինը պետք է պահել հիվանդի գլխի վրա, երկրորդով պետք է լողացնել հիվանդին, իսկ երրորդը՝ լուծել ջրի հետ և տալ հիվանդին ըմպելու։ Այսպիսով ձեռագրական այդ բնագրի մեջ կան 36 հմայական գրերի շարքեր (12 դևերից յուրաքանչյուրի դեմ 3 հմայագիր)։ Այստեղ բերում ենք մի բանի նմուշ այդ հմայագրերից։

Այս կարգի հմայագրեր պարունակող ձեռագրերի քանակը, հենց միայն մեր Մատենադարանում, տասնյակներով է հաշվվում։ Մենք նպատակ չենք ունեցել ուսումնասիրելու բոլոր այդ ձեռագրերը, քաղելու նրանց մեջ գրանցված հմայական բոլոր նշանագրերը. բայց նախնական ուսումնասիրություն կատարելով՝ ընտրել ենք լավագույն մի քանի ձեռագրեր և նրանց նշանների համադրությունից կազմել հմայական նշանագրերի մի ցանկ։

Մեր օգտագործած հնագույն ձեռագիրը (Մատենադարան, ձեռագիր № 4600) 1499 թվականի ընդօրինակություն է, մի ձեռագիր հմայիլ (№ 5)՝ XVI դարից է, իսկ մյուսները՝ XVII—XVIII դդ. ընդօրինակություններ են։

Օգտագործված ձեռագրերն ու հմայիլները սրանք են

a — հմայիլ № 11
b — հմայիլ № 134
c — հմայիլ № 5
d — ձեռագիր № 4322
e — ձեռագիր № 6867
f — ձեռագիր № 5072
g — ձեռագիր № 4600
h — ձեռագիր № 6678

32 Մատենադարան, ձեռ. № 4322, էջ 37բ։
33 Նույն տեղում, էջ 40ա։
34 Նույն տեղում, էջ 41ա։
35 Նույն տեղում, էջ 42ա։

Ցանկ հմայական նշանագրերի

(abcef)	(f), (d)	(adef), (acdef)
(abcdf)	(ae)	(be), (ef)
(abcdef)	(a), , (d)	(a), (e)
(e)	(b) (d) (e)	(a), (e)
(a)		(ade)
(ae)	(e)	(e)
(a)	(c), (d), (c)	, (e)
(a)	(d), (d)	(d)
(a)	(e)	(e)
(d), (d)	(e)	(ad)
(e), (e),	(a)	(d)
(a), (a)	(d)	(bdf) (b),
(abcdf)	(a)	(ed), (ed) (d)
(b)	(d)	(bf), (a)
(h)	(f), (d)	, (c)
(bcf), (c)	(a)	(h)
(b), (e)	(e)	(be
(bf), (ed),	(a)	(h)
(f)		(f)
(f)	(a)	(h)
(b)	(h)	(h)
(a), (ab)	(abdef)	(h)
(a)	(a)	(c)
(f)	(bcef)	(a)

Սույն ցանկը կազմելիս մի շարքում ենք դրել միմյանցից գծագրական աննշան տարբերություններ ունեցող նշանները, ինչպես և ցուցակից դուրս ենք թողել 80-ից ավելի նշաններ՝ հատկապես № 134 հմայիլից (b ձեռագիրը), որը կրում է արաբական ազդեցության խոր կնիք։ Ցուցակի վերջին 14 նշանները խիստ նման են հայկական տառերի։ Չնայած այդ հանգամանքին, նպատակահարմար ենք համարել թողնել դրանք ցուցակում, ենթադրելով, որ այդ նշանները ձևափոխվել ու նմանվել են հայկական այբուբենի նշաններին հետագայում, դրանց իմաստը չհասկացող գրիչների կողմից։

Չենք կասկածում, որ Մատենադարանում պահվող մյուս հմայիլների ուսումնասիրությամբ հնարավոր կլինի այս ցանկը լրացնել հմայական այլ նշանագրերով և դրանց քանակը հասցնել մի քանի հարյուրի։ Անդիրը, սակայն, նշանների քանակի, ինչպես նաև նրանց արտաքին գծագրության մեջ չէ։ Որոնց բովանդակությամբ ու պարունակած նշանագրերով նախաքրիստոնեական ծագում ունեցող հմայական այդ ձեռագրերը, ինչպես արդեն ասացինք, ընդօրինակվել են մեծ մասամբ կիսագրագետ և այդ նշանագրերի իմաստը չըմբռնող գրիչների կողմից։ Այսպիսով դրանք, անտարակույս, շատ են հեռացել իրենց հնադարյան կերպարանքից։

Հարցի ուսումնասիրության ներկա փուլում այդ հմայագրերի վերծանման մասին մտածելը վաղաժամ է։ Դրանք, սակայն, Եղիշեի, Հովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեջ արդեն ծանոթ վկայությունների լույսի տակ՝ դադարում են ախտարական անիմաստ ու մտացածին խրթբրզանքներ համարվելուց և ստանում որոշակի նշանակություն հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով։

Առայժմ մենք չգիտենք հմայական այդ նշանագրերի վերծանման գաղտնիքը։ Սակայն գիտենք արդեն դրանց զուգահեռ, մեսրոպաստեղծ այբուբենով գրանցված հմայական զանազան բանաձևերի և մոգական բժշկության դեղատոմսերի բովանդակությունը։ Վերհիշենք շար աչքի, ծծացավի, ջերմի, գլխացավի մասին վերը բերած բանաձևերը, ավելացնելով, որ ձեռագրերում կան բազմաթիվ այլ հիվանդությունների ու շար դիպվածների առթիվ կազմված ու մեր կողմից չվկայակոչված մի քանի տասնյակ այլ նմանօրինակ աղոթք-բանաձևեր։

Այդպիսի պրիմիտիվ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հավանաբար գաղափարագրեր), որոնց դեմ երկար դարեր պայքարում էին հայոց եկեղեցու դաղափարախոսները։

Մաշտոցը և նրա ժամանակակիցները, որ համառ պայքար էին մղում դեռևս իրենց գոյությունը պահպանած հեթանոսական մնացորդների և նրանց պաշտոնյաների դեմ և իրենց բերանացի ու գրավոր քարոզներով ձգտում էին արմատախիլ անել հեթանոսական հավատքի անկապտելի մասը կազմող կախարդության ու հմայության ձևերը, անշուշտ դաղափար ունեին քրմերի ու կախարդների կողմից կիրառվող հմայական այդ նշանների մասին։

Քրիստոնեությունն ընդունած հույներն ու հռոմեացիները, ինչպես նաև ասորիները և այլ ժողովուրդներ, հեթանոսական ժամանակներից ժառանգած իրենց դիրը առանց տատանվելու, օգտագործեցին քրիստոնեական գրակա-

նություն ստեղծելու համար, որովհետև հունական, լատինական ու ասորական գրերը՝ հնչյունական կատարյալ այբուբեններ էին։

Եվ եթե Մաշտոցը, ծանոթ լինելով հմայագրերին, մայրենի լեզվով գրականություն ստեղծելու համար ստիպված էր տարիների տքնաջան աշխատանքի գնով՝ ի նորո ստեղծել հայկական այբուբենը, այդ նշանակում է, որ հայկական հմայագրերը ի վիճակի չէին ծառայելու ժամանակի պահանջներին։

Հմայագրերի հնարավորությունները խիստ սահմանափակ էին. դրանց օգտագործմամբ հնարավոր չէր ստեղծել իսկական գրականություն՝ պատմագրական, փիլիսոփայական, գեղարվեստական երկեր, թարգմանել Աստվածաշունչը, արտահայտել բարդ ու վերացական գաղափարներ։ Հետևաբար, միանգամայն իրավացի են V դարի մեր սկզբնաղբյուրները, երբ միաբերան փխտում են հայ գրականության գոյությունը Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտից՝ հայկական այբուբենի ստեղծումից առաջ, և սխալ են այն գիտնականները, որոնք պնդում են, թե հեթանոս հայերն ունեցել են գիր ու հարուստ գրականություն, կամ նրանց մեհյանները եղել են «կուլտուրայի և մատենագրության օջախներ»[36]։

* * *

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայկական հմայական նշանագրերի ուսումնասիրության գծով մեր կատարած աշխատանքը չի սպառվում սրանով։ Մեր ձեռքի տակ կան փաստեր, որոնք ցույց են տալիս հայկական միջնադարյան ձեռագրերում հանդիպող «Նշանագիրք իմաստնոց»-ների, ինչպես նաև միջնադարում տարածված ծածկագրերից մի քանիսի սերտ առնչությունը հմայագրերի հետ։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը, որ զգալի աշխատանք է կատարել «Նշանագիրք իմաստնոց»-ներ պարունակող ձեռագրերի մի մասի ցանկը կազմելու գծով, շատ մեծ արժեք է վերագրում դրանց։ Նրա կարծիքով հնարավոր է, թերևս, Մոխենջո-դարոյի (Հնդկաստան) պեղումներից հայտնագործված ու դեռևս չվերծանված գաղափարագրերը վերծանել հայկական գաղափարագրերի (իմա՝ «Նշանագիրք իմաստնոց»-ների) օգնությամբ, համոզված լինելով, որ դրանց իմաստը «բարեբախտաբար պահել են հայկական ձեռագրերը»[37]։

Ցավոք պետք է արձանագրենք, որ պրոֆ. Աբրահամյանի հույսերը չեն արդարանալու, որովհետև կան անժխտելի փաստեր այն մասին, որ «Նշանագիրք իմաստնոց»-ների մեջ մուծված գաղափարագրերին մեր ձեռագրերում տրված իմաստները, իրենց գերակշիռ մեծամասնությամբ (եթե ոչ ամբողջովին), հորինված են հետագայում, XII դարից ոչ վաղ, ուստի և գիտական արժեք են ներկայացնում սոսկ այնքանով, որքանով վկայում են հայկական հմայագրերի նկատմամբ միջնադարում առաջացած հետաքրքրության և նրանց քրիստոնեական իմաստ վերագրելու փորձերի մասին։

---

36 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 165։

37 Նույն տեղում, էջ 167։

О ДОМЕСРОПОВСКОЙ ПИСЬМЕННОСТИ И ЖРЕЧЕСКИХ ПИСЬМЕНАХ

Член-корр. АН Арм. ССР Л. С. ХАЧИКЯН

(Резюме)

Некоторые ученые, указывая на совершенство армянского литературного языка V в., а также опираясь на ряд недостоверных и ошибочно толкуемых письменных данных, пришли к заключению, что армяне до Месропа Маштоца имели письменность, а кое-кто утверждает даже, что имелась «богатая литература», которая якобы была уничтожена после принятия армянами христианства.

Мы согласны с теми учеными, которые отрицают существование домесроповской армянской литературы (М. Абегян, Р. Ачарян, А. Манандян и др.), но склонны принять, что языческие армянские жрецы и колдуны для записи различных магических заговоров и молитв пользовались, по всей вероятности, иероглифообразными знаками. Кое-какие свидетельства об этом (большей частью рукописные) имеются в ряде памятников армянской литературы V—XIII вв., говорящие о «писаных талисманах», «демонических свитках», «колдовских знаках» и т. п. Записи подобного рода, считавшиеся идеологами армянской церкви языческими, как и записанные армянским алфавитом магические заговоры, сохранились в своеобразных рукописях, называемых «гымаилами» («Հմայիլ»), которые хотя и дошли до нас в списках более позднего периода, однако в своих определенных частях несут печать глубокой древности.

В статье приводится ряд воспроизведений этих заговоров и впервые дается список использованных в них знаков. На основе этого мы приходим к выводу, что они могут рассматриваться как сильно искаженные в течение веков образцы заклинательных знаков, применявшихся армянскими языческими жрецами, знахарями и колдунами.

Сфера применения и возможности этих знаков были очень узкими. На их основе невозможно было развивать литературу на родном языке в современном ее понимании. Следовательно, в конечном счете, правы наши первоисточники V в., отрицающие наличие армянской литературы до гениального изобретения Месропа Маштоца, до создания армянского алфавита.